## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**9 հունիսի 2015 թվականի N 62 -Ա**

## <<ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության ռենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի նթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող աժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր արմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն րոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր ոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ նցկացնող մրցութային հանձնաժողովի 2015թ. հունիսի 9-ի «Մրցույթի արդյունքում աղթող ճանաչելու մասին» N 4 որոշումը և եզրակացությունը, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1. Սվետլանա Իսախանյանին 2015թ. հունիսի 10-ից նշանակել «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում, ազատելով նրան տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից:

Հիմք. Ս. Իսախանյանի անձնական դիմումը:

2. Ս. Իսախանյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

*2015թ.հունիսի 9*
*ք. Կապան*